ՄԱՆՈՒԿ ԲԵՅ ՄԻՐԶԱՅԱՆ՝ ԻՇԽԱՆ ՄՈԼԴՈՎԱՅԻ*

Հ. Ճ. ՍԻԲՈՒՆԻ (Ռումինիա)

ԺԴ դարու կեսերեն սկսած՝ հայերը ուշադրավ դեր կատարած են Մոլդովայի տնտեսական ու քաղաքական կյանքին մեջ, նույնիսկ մի շարք դեմքեր են տված երկրի իշխանական աթոռին։

Մոլդովայի իշխանական աթոռին հետ կապված է նաև անուն Մանուկ բեյ Միրզայանի, որ ենիչերիներու 1807 թ. մայիսյան ապստամբությամբ սուլթան Սելիմ Գ-ի և անոր «Նիզամ ջեդիդի» տապալման հետ Օսմանյան կայսրության մեջ սկսված ալեկոծ ժամանակաշրջանին՝ սերտ առնչության մեջ էր Բայրաքդար Մուստաֆա փաշայի շարժման հետ։

I

Սիլիստրեի կուսակալ և Դանուբի օսմանյան բանակի սպարապետ Բայրաքդար Մուստաֆա վեզան, Պոլսո մեջ ենիչերիներու ստեղծած դժնդակ ռեժիմին վերջ տալու իր պատմական փորձը սկսելու մտոք, իր շուրջ էր հավաքեր պետության նախկին ավագանին։

Թուրք պատմաբանները Բայրաքդարի շուրջ հավաքված այդ խումբեն կհիշատակեն միայն ու միայն ներքին գործերու նախկին վարիչ (ֆեթհուդա) *Մուստաֆա Ռեֆիկին, արտաքին գործերու նախկին վարիչ* (ռեխս յուլ-ֆյուրբաբ) *Մեհմեդ Սայիդ Գալիբին, բանակի հաշվակալության նախկին պետ Արզուլլահ Ռամիզին, մեծ եպարքոսության նախկին դիվանապետ* (մեֆրուբզու) *Մեհմեդ Թահսինին և բանակի պարենավորման պետ Մեհմեդ Էմին Բեհիջին։ Թուրքական պատմագրությունը այսպեսով մոռացության կմատնե ոչ միայն խումբի վեցերորդ թուրք անդամին՝ հետագային Ռուսջուգի այան և «Քյոսա Քեհյա» մականվամբ ծանոթ Ահմեդ էֆենդիին, այլև, մանավանդ, խումբի սյուներեն հայազգի Մանուկ բեյ Միրզայանին։*

Արդարև, Մանուկ բեյ մաս կկազմեր Բայրաքդար փաշայի շուրջ կազմված «Ռուսջուգի բարեկամներ» (Ռուսջուգ յարանը) *անունով ծանոթ խմբակցության, որ իր մտահոգության առարկան էր բրած համաձայնության եզր մը գտնել ռուսական հրամանատարության հետ և Ռուսիո հետ հաշտություն կնքել առանց ֆրանսական միջամտության, ու նաև դսպել ենիչերիներու կազմակերպած ըմբոստությունը՝ Սելիմ Գ վերստին իր դահին վրա բերելու և «Նիզամ ջեդիդը» փրկելու հույսով։*

Ավելին, Մանուկ բեյ Ռուսջուգի խմբակին մեջ գլխավոր դեմքն էր, որ հոդն ստանձնած էր հասկացողության մը գետինը պատրաստելու ռուսերուն հետ, և հետո ալ՝ Սելիմի գահընկեցությենեն ետք, զեկավար ոգին հանդիսացած էր

---

* *Տպագրվում է կրճատումներով (խմբ.)։*

1 *Ի. Հ. Ուզունչարշըլը, Ալեմդար Մուստաֆա փաշա, Իստանպուլ, 1942, էջ 82 (թուրքերեն)։*

խմորվող պայքարին՝ Բայրաքդարին դրդելով իր շուրջ համախմբել «Նիզամը Ջեդիդի» կուսակիցները և ապա՝ արշավել Պոլսո վրա։

Մանուկ բեյի այդ դերին ակնարկություն ընելն անդամ հեռու են թուրք պատմագիրները, իսկ Ուզունչարշըլին սոսկ «Բայրաքդարի սեղանավոր Մանոք»-ի անունը կուտա՝ երբ կհիշե թե Բայրաքդարի եղերական վախճանին հետո Յըլըք-Օղլու Սուլեյմանին պաշտոն էր տրված՝ Քյոսա Քեհյա Ահմեդը, «Քափթանը դեբիա» Ռամիզ փաշան և Մանուկ բեյը ձերբակալել Ռուսջուքի մեջ։

Թուրք պատմագիրներուն անծանոթ մնացած կթվին ըլլալ այն օտար աղբյուրները ևս, որոնք կխոսին ռուս-թուրքական հաշտության բանակցությանց մեջ Մանուկ բեյի դերի մասին, դեռ այն՝ օրերուն, երբ Բայրաքդարը Ռուսջուք էր և շուրջն արդեն շատերն ուներ թուրք պետության երբեմնի ավագանիեն։ Անոնց աչքեն վրիպած է նույնպես ֆրանսական հյուպատոս Մերիաժի 1808 հունիսին Ռուսջուքեն իր կառավարության ուղղած տեղեկությունը, որ կիմացներ, թե մայիսի վերջերը այնտեղ ժամանած և 34 օր Մանուկ բեյի մոտ հյուր եղած է ռուս պատվիրակ մը, պաշտոն ունենալով շփման մեջ մտնել Բայրաքդարի հետ՝ առանց ֆրանսական միջնորդության Սլոբոդիայի մեջ հաշտության բանակցությանց սկսելու համար[2]։

Սովետական պատմաբան Միլլերը, Մուստաֆա փաշայի կյանքին ու գործունեության նվիրված հատորին մեջ[3] պատշաճորեն անդրադարձեր է Բայրաքդարի կողքին Մանուկ բեյի կարևոր դերին, զոր ընդգծեց Բուխարեստի իր դասախոսության մեջ, նշելով. եթե Աբդուլլահ Ռամիզ՝ Ռուսջուքի խումբին մեջ «աջ բազուկն էր Բայրաքդար Մուստաֆա փաշայի, վերջինիս ձախ բազուկն ալ համբավավոր հայ փոդատեր Մանուկ բեյ Միրզայանն էր, Մոլդովայի իշխան անվանյալը, որուն կենսագրությունն ու գործունեությունը լայնորեն ուսումնասիրված են ռումին(հայ) գիտնական Հ. Ծ. Սիրունիի կողմե»[4]։

Տողերիս հեղինակը պարտք կհամարե խոստովանիլ, որ երբ Բայրաքդարի մասին իր ուսումնասիրությունը լույս կընծայեր 1943-ին, տակավին հայտնաբերված չէին Մանուկ բեյի դերը լուսաբանող արխիվային այնքան փաստաթղթեր, որոնցմով՝ այժմ հնարավոր է բարձրացնել մեր հայրենակցի գործունեությունը նախ իբրև սեղանավորը Թերսիանեքլի-օղլուի և Բայրաքդարի, ապա որպես ամենեն մտերիմ խորհրդականը Ռուսջուքի խումբի դեկավարին։

Կարիք չկա այստեղ մանրամասն անդրադառնալու պետական այն հեղաշրջման, որ վերջ տվավ ենիչերիներու ռեժիմին։ Մենք այդ մասին գրեր ենք այլուր[5]։ Այսքանն ըսենք այստեղ, որ 1807 մայիսի ըմբոստության պարագլուխ չարաշուք Քարաքջի-օղլուի և մեծ մյուֆթիի (ու անոնց դրածո Մուստաֆա Դ սուլթանի) սանձարձակություններուն վերջ տալու նպատակով՝ «Ռուսջուքի բարեկամները» 1808 հունիսին որոշեցին գործի անցնիլ։ Մեր ձեռքի տակ եղած նյութերը կվկայեն, որ այդ որոշման մեջ ևս վճռական դեր է ունեցեր Մանուկ բեյի խոսքը։

Պատմութենեն հայտնի է, որ Բայրաքդարի շարժումը հաջողությամբ պսակվեցավ, և վերջին պահուն իր բանտախուցին մեջ սպանված սուլթան

---

[2] Hurmuzaki, Documente, Supliment, II, p. 517.

[3] А. Ф. Миллер, Мустафа паша Байрактар, Москва, 1947.

[4] A. F. Miller, Abdoullah Ramiz Pacha en exil, „Revue des etudes sud-est europeennes", Bucarest, 1964, p. 422

[5] H. Dj. Sirouni, Moustafa Pacha Bairakdar..., pp. 76—81.

Սելիմի փոխարեն գահ բարձրացված սուլթան Մահմուդը մեծ եպարքոսության պատրոնը հանձնեց «Ռուսջուգի բարեկամներու» ղեկավար Մուստաֆա փաշային։

Մինչդեռ «Ռուսջուգի բարեկամները» գրեթե բոլորն ալ իր մոտն ունեցավ Բայրաքդար փաշան մեծ-եպարքոս դառնալե հետո, Մանուկ բեյը շարունակեց Ռուսջուգ մնալ։

Բայրաքդարը պատճառներ ուներ Մանուկ բեյը Ռուսջուգ պահելու, քանի որ անհանգիստ այդ ժամանակաշրջանին քաղաքը կշարունակեր կարևոր կեդրոն մը մնալ կայսրության համար։ Ճիշտ է, որ 1807 օգոստոսի 24-ին Սլոբոզիայի մեջ ռուսերուն հետ կնքուած գինադադարը ի զորու էր դեռ, և որ բանակին բուն կեդրոնը Սիլիստրեն կնկատվեր, սակայն Ռուսջուգը միշտ կպահեր իր կարևորությունը, և այնտեղ էր, որ կկեդրոնանային շփումները ռուսերուն հետ։

Ուրիշ աշխատության մը վերապահած ենք խոսիլ այն դերի մասին, զոր Մանուկ բեյ ունեցավ ռուս-թուրքական հաշտության բանակցությանց մեջ։ Չենք կրնար, սակայն, դեթ հարևանցի չարձանագրել այստեղ, որ Մանուկ բեյ ինքն էր, որ Բայրաքդարի մեծ-եպարքոսության օրով վարեց ռուսերուն հետ բանակցությունները։

Արդարև, դեռ 1808 հուլիսի 11-ին, երբ Մուստաֆա փաշան Պոլիս մեկնած էր արդեն, հայազգի դործիչն է, որ կընդուներ Ռուսջուգ ժամանող ռուս բանագնաց Բերվիցը[6]։ Ան է, որ 1808 օգոստոսին ռուսական զորահրամանատար իշխան Պրոզորովսկիի պատվիրակին կհաղորդեր, թե Բայրաքդարը որոշած է հաշտություն կնքելե հետո կոիվ հայտարարել Ֆրանսային[7] և, ուրեմն, հանուն Մուստաֆա փաշայի կառաջարկեր խաղաղություն հաստատել Մոլդովան և Վալաքիան ձևապես Օսմանյան կայսրության կազմի մեջ պահելով, այլ փաստապես Ռուսիո ենթարկելով[8]։ Ան է դարձյալ, որ օգոստոսի 31-ին Բերվիցին կհանձներ մեծ-եպարքոսի պատասխանը Պրոզորովսկիին, որուն կհաղորդվեր, որ սուլթանը չուզեր անդամ լսել հողային զիջումի մասին և որ պատրաստ է բարյացակամ դիրք բռնելու, եթե Ռուսիա պատերազմի ուրիշ պետությանց հետ[9]։

Բացառիկ շահեկանություն ունի նամակը, զոր Մուստաֆա փաշա 1808 օգոստոսի 26-ին ուղարկեր է Մանուկ բեյին։ Անով մեծ-եպարքոսը իր համամտությունը և դոհունակությունը կհայտնե Մանուկ բեյի վարած բանակցություններու կապակցությամբ, նոր հրահանդներ կուտա անոր, առաջիկային իբրև մեծ-եպարքոսի ներկայացուցիչ իր բռնելիք դիրքին շուրջ՝ զգացնելով, որ Թուրքիա ջերմ փափաքոդ է հաշտության, բայց տրամադիր չէ հողային որևէ զիջում ընելու, և, վերջապես, կհավաստե իր բացարձակ վստահությունը հայ դործիչի իմաստության ու կարողություններուն նկատմամբ[10]։

Սակայն Մանուկ բեյ Ռուսջուգ կմնար ոչ միայն շարունակելու համար շփումները ռուսերուն հետ, այլև հետևելու քաղաքական աշխարհի անցու-

---

6 ՄՌԱՔԱ (Մոսկվայի՝ Ռուսիո արտաքին քաղաքականության արխիվ), ֆոնդ 1921, թուղթ 237—240։

7 Նույն տեղում, թ. 443։

8 Նույն տեղում, թ. 493—494։

9 Նույն տեղում, ֆ. 1922, թ. 13—21։

10 Ֆուխարեստ քաղաքի պատմության թանգարան, թիվ 26510։

դարձերուն և անոնց մասին տեղյակ պահելու մեծ-եպարքոսը, քանի որ հյուսպատոսական շրջանակներու հետ շփվող և Օսմանյան կայսրության նկատմամբ Եվրոպայի դիտումներուն գիտակ իր գործակալներն ուներ։ Արդարև, 1808 սեպտեմբերի 15-ի այն պաշտոնագրով, որով Մանուկ բեյը Պոլիս կհրավիրվեր, Մուստաֆա փաշան անկե լուսաբանություններ կուզեր միջազգային կացության շուրջ[11]։

Մանուկ բեյ իր ուսեբուն ուրիշ ահավոր հոդ մը ևս ուներ՝ պարենավորումը Դանուբի թրքական բերդաքաղաքներուն և նորոդությունը անոցմե ոմանց։ Պոլսո վրա շարժվելե առաջ Բայրաքդարը այդ հոդը ևս վստահեր էր հայ գործիչին և ինքը Ռուսչուքն հեռացեր էր բոլորովին ապահով։ Իրոք, շրջանի մը մեջ, որ դժնդակ օրեր կապրեր տասնյակ տարիների ի վեր՝ մեկ կողմեն իրար և մյուս կողմեն պետության դեմ ավատապետներու պայքարներուն երեսեն, և ուր ժողովուրդը կհեծեր տուրքերու և կեղեքումներու բեռան տակ, դժվար էր պատերազմ վարել, մանավանդ որ պետությունն իսկ ճգնաժամ կապրեր 1807 մայիսի դեպքերեն ի վեր։ Որքան ալ դեռ ի զորու ըլլար զինադադարը՝ այնուամենայնիվ բանակը իր առօրյա կարիքներն ուներ, և բերդաքաղաքները նորոգել պետք էր։

Բերդաքաղաքները, որոնց պարենավորումը նախատեսված էր առաջին հերթին՝ Իսմայիլը, Իսաքչան և Մաչինն էին, ուր ավելի հոծ թիվով կեդրոնացած էր օսմանյան զորքը։ Անոնց կհետևեին Ադա-կալեն, Սիլիստրան, Ջուրջովան, Սրշովան, Թուլչան, Բրայիլան և Զիմնիչան։ Նորոգության ենթարկված բերդաքաղաքներեն ծախսացուցակները կթվեն Ջուրջովան, Ռուսչուքը, Վառնան, Թուրնուն և Շիշթովը։ Պահպանված հարյուրավոր արխիվային փաստաթղթերը[12] կվկայեն այն բացառիկ դերի մասին, զոր Մանուկ բեյ ունեցավ 1808 ամռան և աշնան, ինչպես ունեցեր էր նախորդ տարին ալ։ Այս երկրորդ տարին ավելի դժվար էր, անշուշտ, այդ աշխատանքը, որովհետև ուժասպառ էր շրջանը։

Պատմության անծանոթ կմնան ջանքերը, զոր այդ օրերուն թափեց Մանուկ բեյ՝ Սերբիան ազատելու համար սրածության մը ստույգ և անմիջական վտանգեն, պահու մը, երբ սերբ ժողովուրդը գերմարդկային ճիգեր կըներ ցմիշտ ազատագրվելու համար թրքական լուծեն և երբ ռուս զորքերուն ժամանումը Դանուբի ափը զայն ամրապնդեր էր իր հույսերուն մեջ։

Դժբախտություն էր Սերբիո համար, որ Սլոբոզիայի զինադադարի պայմանագիրը չէր նախատեսեր կռիվներուն վերջ տալ նաև այնտեղ։ Այնպես որ թուրքերը, ռուսերուն հետ իրենց կնքած կրակի դադարեն օգտվելով, կսպառնային սերբերուն, որոնք այնքան ջերմորեն աջակցած էին ռուս բանակին՝ կռիվներու պահուն։ Պրոզորովսկի, ռուս հրամանատարը, ինքն ալ մտահոգ, ստիպվեցավ դիմել Բայրաքդարին, որ արդեն ճամբա ելած էր դեպի Պոլիս, որպեսզի կեցնե թուրքերուն սկսած սրածությունը Սերբիո մեջ։ Ու ահա Մանուկ բեյ ինքն ալ կմիջամտե իր կողմե Բայրաքդարի մոտ՝ ինչպես կպատմե իշխան Լազարյանին զրկած ինքնակենսագրական իր նոթերուն մեջ. «...Գրեթե զբովանդակ Սերվիայն միանգամայն արտաքոյ դաշնագրի թողեալ էին, ուստի և անդ ոչ դադարէին սրածութիւնք ի կողմանէ տաճկաց. մինչ զի գնէազ

11 ԲՔՊԹ, թիվ 26232։
12 ԲՔՊԹ, թթ. 26499, 35078, 42381, 26365 և։

Փրոզորուվսքին հարկադրեալ էր գրել փաշային՝ խնդրելով զդադարումն զինուց լինել ի բոլոր Սերվիա. և զի յայնժամ զոլով հասեալ Մուստաֆա փաշային ի Անգրիանուպոլիս, առաքեցի զզիր Գնէզի առ փաշայն՝ զրելով և իմ զիր աղաչանաց և համոզելով զնա ի կատարել զխնդիր զնէզին, որպէս և իսկ արար և գրով խոստման ի կողմանէ Տերութեանն պատասխանեաց նմա. և եթէ չիցէ յաջողեալ այսպէս, ապաքէն զրովանդակ Սերվիա յաւարի հարկանէին տաճիկք. զի չունէին յայլ ուստեք զպատերազմական զբաղմունս»։

2

Հազիվ բարձրացած նպարքոսական պաշտոնին, Բայրաքդար Մուստաֆա փաշային առաջին մտածումն եղավ վարձահատույց ըլլալ Մանուկ բեյի, ոչ միայն այն աջակցության համար, զոր ընծայած էր միշտ իրեն, այլ նաև այն ծառայություններուն փոխարեն, զորս ան մատուցած էր սլետության։ Այդ վարձատրությունը Մոլդովայի վոյվոդության աստիճանը պիտի ըլլար։

Մանուկ բեյի անցյալ գործունեությանը անծանոթ չէր անշուշտ նոր Սուլթանը, և Բայրաքդարը շատ դժվարություն քաշած պետք չէ ըլլա համոզելու համար զայն, որպեսզի իր զործակցին շնորհե «Մոլդովայի իշխանության աստիճանը» (Բուդդան Վոյվոդալրը վիայեսի)։ Ինչպես իր 1808 սեպտեմբերի 22 թվակիր պաշտոնագրով Մուստաֆա փաշան կհաղորդե Մանուկ բեյին, Սուլթանը ծանոթանալով հայ գործչի վաստակը ներկայացնող փաստաթղթերուն, իր իսկ ձեռքով հետևյալն է մակագրեր. «Թարգման Մանուկ լավ կաշխատի ու կտքնի. գնահատեցի անոր ջանքը, զինքը տեսնեմ՝ ինչպես պիտի աշխատի և ջանադիր ըլլա ասկե ետք. ահա շնորհեցի իրեն Մոլդովայի վոյվոդության աստիճանը. ավետեցեք իրեն»[13]։

Դժբախտաբար, շատ քիչ բան գիտենք Մանուկ բեյի «Մոլդովայի իշխան» անվանման պարագաներուն մասին։ Հայ գործչի կյանքի այդ էջը անծանոթ մնացած էր ինչպես հայ, այնպես էլ ռումին պատմագրության։ Պետք եղավ, որ 1936-ին Բեզվիքոնի քանի մը տող նվիրե այդ հանգամանքին, իսկ 1943-ին այս տողերը գրողը ամբողջ զըբույկի մը նյութ ընե զայն, որպեսզի շահագրգռություն ստեղծվի զգայացունց այդ նորության շուրջ, որուն մասին, Բայրաքդար Մուստաֆայի վերոհիշյալ նամակեն զատ, ժամանակակից ուրիշ վավերաթուղթ չունինք ի ձեռին։

Մանուկ բեյ ինքն իսկ հազիվ փոքր հատված մը նվիրած է այդ իրադարձության՝ կենսագրական այն նոթերուն մեջ, զորս 1810 նոյեմբեր 24-ին Բուխարեստեն զրկած է Պետերբուրգ, իշխան Հովակիմ Լաղարյանին։ Այդ նոթերուն մեջ Մանուկ բեյ որոշակի կրսե, թե իրեն շնորհված տիտղոսը վարձատրությունն է իր կատարած զերին ռուս և թուրք հաշտության բանակցությանց մեջ. «Յետ այնորիկ սկիզբն արար փոխարքայն որոնել զհնար հաշտութեան ընդ տէրութեան ռուսաց՝ առանց միջնորդութեան այլոց տէրութեանց, զորոյ և զսկզբանսն առնել և թղթակից լինել ընդ զնէզ Փրոզորուվսքի յանձնեաց ինձ. այսոցիկ ամենայն ծառայութեանց իմոց քաջահմուտ զոլով Սուլթան Մահմուդի՝ հրամայեալ էր յայնժամ փոխարքային տալ ինձ զտիտղոս պետութեան Մոլտավիոյ և Վլաքիոյ՝ Մանուկ պէկ մականուանելով»[14]։

---

13 ԲՔՊԲ, Քիվ 26515։

14 ЦГИАЛ. ф. 880, оп. 5, д. 7, лл. 76—83

Միակ լրացուցիչ տեղեկությունները կպարտինք համբավավոր Պապիկին, որ Պոլիս էր ինքն ալ Մանուկ բեյի հոն գտնված օրերուն, և որ հետագային Հրնչեշթի մեջ գրի է առած իր հուշերը, որոնցմե օգտված է Մսեր Մսերյան՝ շարադրելու համար Մանուկ բեյի կենսագրությունը. «Թէպէտ ե գիտէր քաջ Մուստաֆայ փաշայ դիւրապատրաստ բերումն Մանուկ պէյի հանապազ առ ամենայն աշխատութիւն յօգուտ պետութեան, այլ կամեցաւ յայնժամ յօժարադոյն ես ի նոյն վառել զնա՝ բարձրագունի իմիք հասուցանելով պատուոյ յարժանաւոր փոխարինումն առաջնոցն ծառայութեանցն, յայտնեաց թագաւորին զմի ի զմեծամեծ և յոլովագէմ վաստակոց նորա և խնդրեաց կացուցանել զնա ի պէյութեան Մոլգաւիոյ։ Եւ թագաւորին հաւանեալ այնմ՝ ասաց նմա ազդ առնել Մանուկ պէյի զրնտրութիւն իւր ի նոյն»[15]։

Զարմանալի թող չթվի, եթե մանրամասնությունները մեզ կպակսին այդ դեպքին շուրջ։ Ինչպես պիտի տեսնենք, ո՞չ Մանուկ բեյ հետամուտ եղավ իրեն ընծայված պատվին, և ոչ ալ պարագաները թույլ պիտի տային՝ եթե նույնիսկ բաղձար Մոլդովայի աթոռը երթալ բաղմիլ։

Ավելացնենք, որ այդ պահուն թափուր էին ըլլա՛ Մոլդովայի, ըլլա Վալաքիո իշխանական աթոռները։ 1806 օգոստոս 12-ին Աքարլաթ Քալլիմաքի «Մոլդովայի իշխան» անվանված էր Ալեքսանդր Մորուզիի տեղ՝ հաղիվ երկու ամիս պաշտոնավարելու և հոկտեմբերի 5-ին զարձյալ Մորուզիի տալու համար իր տեղը։ 1807 մարտին իշխանությունը կհանձնվեր Ալեքսանդր Հանջերլիին, իսկ հուլիսի 23-ին Մուստաֆա Դ սուլթանը, գահ բարձրանալեն հաղիվ երկու ամիս հետո, այն կշնորհեր գարձեալ Քալլիմաքիին, որուն իշխանությունը սակայն անվանական պիտի մնար ամբողջ 5 տարի՝ մինչև ռուս-թուրքական պատերազմի վախճանը։ Այդ տարիներուն ձեռքե ձեռք կանցներ նաև Վալաքիո իշխանական աթոռը։ Այնպես որ, երբ 1808 սեպտեմբերի 22-ին Մանուկ բեյ Մոլդովայի իշխան կանվանվեր՝ Յաշի աթոռը անվանապես Քալլիմաքիի կպատկաներ ավելի քան տարիե մը ի վեր։

Մանուկ բեյը Մոլդովայի իշխան հռչակելեն ճիշտ շաբաթ մը առաջ, Բայրաքդար անհրաժեշտությունն զգաց զայն Պոլիս իր մոտ հրավիրելու։ Որքան ալ դժվար ըլլար զայն այդ օրերուն հեռացնել Ռուսջուգեն, այնուամենայնիվ Պոլսի մեջ ևս անոր կարիքն ունեին, ինչպես ցույց կուտան Մանուկ բեյի առխիվին մեջ պահվող մեծ-եպարքոսի 1808 սեպտեմբերի 15 պաշտոնագիրը[16] և վառոդարանի պետ Թահսին էֆենդիի սեպտեմբերի 10 թվակիր հայատառ թուրքերեն նամակը[17], երկուքն ալ ուղղված հայ գործչին։

3

1808 հոկտեմբերի 16-ին Մանուկ բեյ ժամանեց Պոլիս և համակրանքի ցույցով ողջունվեցավ մայրաքաղաքի հայերուն կողմե[18]։ Անծանոթ դեմք մը չէր անշուշտ ան մայրաքաղաքին մեջ, շնորհիվ իր հաճախակի այցերուն և առևտրական կապերուն։ Բայց առավելապես մեծ-եպարքոսին հետ իր մտերմությունն էր, որ պատճառ կըլլար համակրանքի արտահայտություններուն,

15 Մ. Մսերյան, էջ 150—151։
16 ԲՔՊԹ, թիվ 26419։
17 ԲՔՊԹ, թիվ 35044։
18 ՄՌԱՔԱ. ֆ. 1922, թ. 317։

մանավանդ որ Մանուկ բեյը Պոլիս կժամաներ սպահու մը, երբ կրկին բորբոքած էին վեճերը հայերու և հույներու միջև՝ Երուսաղեմի սրբատեղիներուն շուրջ։

Դժբախտաբար, լրիվ լուսաբանված չեն այն շարժառիթները ևս, որոնք Մանուկ բեյը մղեցին Պոլիս հասնելէ հետո հրաժարիլ Մոլդովայի իշխանության բացառիկ պատիվեն, զոր սուլթանը կրնայեր իրեն։ Չենք կարծեր, որ ան կանխօրոք լուր ունեցած լլլար Բայրաքդարի «անակնկալեն», թերևս ինքն իսկ բաղձացած ըլլա ատենին իրեն ընծայվող պաշտոնը, մանավանդ որ նախորդ սուլթանին օրով իրեն շնորհվեր էր «Բարձրագույն դրան թարգմանիչ» տիտղոսը, որուն նախապես արժանացեր էին միշտ զույգ իշխանապետությանց աթոռներուն մեկուն կամ մյուսին տիրացող հույները։

Պապիկի վկայությանց հիման վրա, Մսերյանը Մանուկ բեյի մերժումը հետևանքը կնկատե անոր փափկանկատությանը դեպի Քալլիմաքին, որ իր բարեկամն էր և որ, ինչպես հիշեցինք, «Մոլդովայի իշխան» անվանված էր տարի մը առաջ, սուլթան Մուստաֆա Դ-ի օրով։ «Իբրև էաո Մանուկ պեյդ,— կդրե ան,— զգիր Մուստաֆայ փաշայի, թողեալ նոյն յետ այն զսկզբնաւորեալ գրան դաշնախօսութեան, որ ընդ ոուսս ընդ սակս հաշտութեան, շոքաւ ի Կոստանդնուպօլիս։ Եւ անդ իբրև մատուցին նմա հրովարտակքն արքունի վասն պէյութեան Մոլդաւիոյ՝ չկամեցաւ ընդունիլ զնոսին, և այս՝ միայն ի շնորհս բարեկամութեան ընդ Քալլիմաքայ, որ ամաւ առաջ ի նմին իսկ իշխանութեան կարդեալ կայր յաւուրց անտի նախայաջորդ արքային։ Այնչափ հաւատարմագոյն էր Մանուկ պեյ յանեղծ պահել միշտ լօդակապ սիրոյն ընդ իւրոց բարեկամաց՝ զփառս նոցա և զօգուտ նախամեծար, քան զիւրսն ընտրելով»[19]։

Ճիշտ է, որ Մանուկ բեյ բարեկամական կապեր ուներ Աքարլաթ Քալլիմաքիի հետ, ինչպես ուներ բոլոր այն հույներուն հետ, որոնք կուգային կամ կուգեին գալ Բուխարեստի կամ Յաշի աթոռներուն վրա։ Մանուկ բեյի արխիվին մեջ Քալլիմաքին ևս մուրհակներ ունի իր հայ բարեկամեն ստացված փոխառություններուն համար, որոնք անվճար մնացած էին իր իշխանական աթոռ դալեն հետո ալ։ Մեր ձեռքին տակ ունինք Քալլիմաքիի կողմե Մանուկ բեյին ուղղված նամակի մը սևագրությունը, որուն մեջ Մոլդովայի իշխանը կիմացներ, թե ի վիճակի չէ մարելու 24082 ղրուշի իր պարտքը՝ որ իրմե կպահանջվեր ճիշտ այն օրերուն, երբ Մանուկ, վտանդի մը հոտը առած, կպատրաստվեր Բուխարեստեն հեռանալ՝ հաշվեհարդարի ենթարկելով իր առկախ գործառնությունները[20]։

Մեր կարծիքով, Մանուկ բեյի մերժումը տարբեր շարժառիթ ուներ։ Ան կզգար, որ խարխուլ էր երկրին մեջ Բայրաքդարի ստեղծած ռեժիմը, և որ խոհեմություն չէր անոր կոթնած՝ բարձրանալ Մոլդովայի իշխանական աթոռը։

Իր Պոլիս ժամանումեն քիչ հետո, Մանուկ բեյ ունկնդրության ընդունվեցավ սուլթանեն։ Այդ մասին որևէ լրացուցիչ տեղեկություն չունինք, բացի այն նոթերեն, զորս Պապիկի հուշերեն քաղած է Մսերյան։ Այդ նոթերուն մեջ կրսվի, թե Մանուկ բեյ վեհապետին ալ հայտնած է շարժառիթը, որ զինք կդրդե չընդունիլ իրեն ընծայված բացառիկ պատիվը[21]։

---

19 Մ. Մսերեան, էջ 151։
20 ԲՔՊԹ, թիվ 42378։
21 Տե՛ս Մ. Մսերեան, էջ 160—161։

Ինչպես կերևա, Մանուկ բեյի մերժումին հակառակ, սուլթանը դեռ հրաժարած չէր պայն Մոլդովայի իշխան տեսնելու իր ցանկութենեն, խորապես ազդված այն տպավորութենեն, որ Մանուկ բեյ թողած էր իր վրա ունկրնդրության ընթացքին։

«Մոլդովայի իշխան» անվանման հրովարտակը ստանալու համար չէր միայն, որ Մանուկ բեյ հրավիրված էր Պոլիս։

Պատճառներեն մեկը, որոնց համար Մանուկ բեյ հրավիրված էր Պոլիս, իր ներկայության անհրաժեշտությունն էր մայրաքաղաքին մեջ այն բանակցությանց ընթացքին, որոնք պիտի սկսեին շուտով ռուսերուն հետ՝ հաշտության գետինը դտնելու համար։ Մանուկ բեյ ինքն էր, որ պիտի վարեր խոսակցությունները ռուս պատվիրակի մը հետ, որուն կսպասվեր։

Եվ ահա՛ 1808 նոյեմբերի 12-ին Պոլիս կժամանե ռուս բանագնաց կապիտան Քրասնաքուցի, որ իսկույն Մանուկ բեյի միջոցով կապ կհաստատե մեծեպարքոս Մուստաֆա փաշայի հետ։

Այդ բանակցությանց մասին նոթեր կգտնենք ոչ միայն Մանուկ բեյի պույդ հայ կենսագիրներուն մոտ և Ռուսիո արտաքին քաղաքականության արխիվային նյութերուն մեջ, այլև այն հուշագրության մեջ, որ Քրասնաքուցի լույս է ընծայած 1815-ին։ Մսերյան, որ իր ձեռքին տակ ունեցած է թե՛ այդ գիրքը, թե՛ Պապիկի նոթերը, կթելադրե վերապահ ըլլալ հաճախ դեպի ռուս պատվիրակին պատմածները, մանավանդ, ինչ կվերաբերի նոյեմբերի 14—15-ի եղերական դեպքերուն[22]։

Պետք է ըսել, որ Մանուկ բեյ առաջին անգամ չէր, որ Պոլիս կուգար։ Ան հաճախ եկեր էր-մայրաքաղաք, ըլլա Թերսեննքլի-օղլուի, ըլլա Բայրաքդարի այանության օրերուն՝ լուծման հանգեցնելու համար Դանուբի շրջանին հետ կապված կնճռոտ հարցեր։ Ան Պոլիս եղեր էր տարի մը առաջ ալ, 1807 մարտյան դեպքերուն ատեն, և հպիվ կրցեր էր ճողոպրիլ ստույգ վտանգե մը։

Մանուկ բեյին հաճելի չեղան, ինչ որ տեսավ Պոլսո մեջ։ Ան գժգոհ էր Բայրաքդարի վարած նոր կյանքեն, ինչպես նաև անոր շրջապատեն։ Մարդիկ փոխվեր էին՝ երբ եկեր էին դործի գլուխ։

Կոստանդին Կարաջա-Պանուլ, որ այդ շրջանի մայրաքաղաքի դեպքերու նկարագրությունը թողած է մեղի, ի միջի այլոց կպատմե դեպք մը՝ ցույց տալու համար, որ հայ գործիչը տարբեր էր Բայրաքդարը շրջապատող մյուս մարդոցմեն։ Այդ դեպքը հետևյալն էր. Հունաց պատրիարք Կալինիկոս 1808 սեպտեմբերի 12-ին աթոռ բարձրացած էր՝ մեծ վեզիրի սեղանավորներուն աջակցությամբ։ Բացի իր պատրիարքության համար վճարված 150 քսակ ոսկիեն, ան հանձն էր առած 200 քսակ ևս վճարել՝ կարդ մը հոգևորականներ փոխելու իրավունքը ստանալու համար։ «Երբ Մանուկ բեյ Ռուսջուգեն եկավ,— կգրե Կարաջա-Պանուլ,— պախարակեց սեղանավորները, որոնք միջամտած էին պատրիարքի ընտրության, և հանդիմանեց Քյոսա-Քեհիան, որ խառնված էր այդ ապօրինության՝ այդ ձևով ստվեր բերելով նաև մեծ վեզիրի համբավին»[23]։

Մանուկ բեյ գժգոհ էր մանավանդ, որ Բայրաքդարը ստանձներ էր մեծեպարքոսի պաշտոնը, մինչդեռ ինքը անոր դեռ Ռուսջուգեն չմեկնած խորհուրդ էր ավեր իր առաքելությունը գլուխ բերել և հեռանալ մայրաքաղաքեն։ Բայրաքդարն ալ սիրով չէր ընդունած անշուշտ սուլթանին առաջարկը՝ ի մտի ու-

22 Մ. Մսերեան, էջ 179։
23 Constantin Caragea-Banul, Efimeride, p. p. 169—170։

ննալով իր հայ բարեկամի խորհուրդները և մանավանդ հիշելով, որ անոր անսացած չըլլալուն համար անուղղակիորեն պատճառ էր եղած սուլթան Սելիմի սպանության։ Արդարև, Մանուկ բեյ թելադրած էր Բայրաքդարին սուլթան Մուստաֆան ձերբակալել՝ երբ ան մայրաքաղաքեն դուրս իր զորաստեղին այցի դար, և հետո միայն մտնել Պոլիս և կրկին դահի վրա նստեցնել սուլթան Սելիմը։

Պապիկի նոթերուն համաձայն, Մուստաֆա փաշան ի սկզբան իսկապես մերժած է ստանձնել մեծ-եպարքոսի պաշտոնը. «իսկ նորա այն էր պատճառ հրաժարանացն, զի կանխագոյն ևս Մանուկ պէյ՝ մինչդեռ ի Ռուսջուգ էր նա՝ ուշակեալ սմա զմեծամեծ վտանգսն, որոնց մարթ էր ի վերայ դալ յառնուլ նորա զանձամբ զփոխարքայութիւնն, թելադրեալ էր՝ մի բնաւ իղձ լինել այնմ պաշտաման՝ շլացեալ ի շքեղաշուք փառացնորութենէն»։ Յետ յաճախագոյն բանից իբրև ոչ կարաց սուլթան Մահմուտ տալ ընդունել նմա զփոխարքայութիւնն, սկսաւ երդմնի լինել՝ թէ հրաժարի և ինքն ի թագէն, եթէ յանձն չառնուցու նա թեակից իւր լինել պաշտօնակալութեամբ այնոսիկ, զի օրինակ առաջի կայր նմա ի հանապազորդ խէթ վտանգի՝ ազէտ մահուան սուլթան Սելիմայ։ Յայնժամ և Մուստաֆայ փաշայ զի հնար չիք դերծանելոյ ի թախանձանաց անտի թագաւորին՝ ակամայ կամօք յանձն էառ ի շնորհս նորա զփոխարքայութիւնս ի 28 յուլիսի 1808 ամի, պայմանաւ անդրէն ի բաց թողլոյ զայն յետ ամսոյ ինչ»[24]։

Մանուկ բեյ Պոլիս գալեն հետո ևս փորձեց Բայրաքդարը համոզել, որպեսզի մեծ-վեզիրի պաշտոնը թողու և Ռուսջուգ դառնա կրկին։ Կերևի թե Մուստաֆա փաշա պահ մը տեգի տված է իր հայ գործակցի պնդումներուն և սուլթանին ներկայացած է իր հրաժարականը տալու, մանավանդ որ իր ձեռք առած միջոցներուն շնորհիվ խաղաղած էր արդեն մայրաքաղաքը, իսկ Ռումելիի և Անատոլուի բոլոր մեծամեծները երդմամբ համախոհ հայտարարած էին իրենք զիրենք ներմուծված բարեկարգութեանց, այնպես որ այլևս կարիք չկար Պոլսո մեջ իր ներկայության[25]։

Մահմուդ Բ տեղյակ էր Մանուկ բեյի ջանքերուն՝ Բայրաքդարը վերադարձնելու Ռուսջուգ, իր պաշտօնին, մինչ ինք կարիք ուներ նույն այդ Բայրաքդարին իր իսկ քովը։ Այնպես որ, երբ Մուստաֆա փաշա ներկայացավ՝ իրեն հրաժարական տալու՝ չկրցավ իր յուզումն ու վրդովումը զսպել և, ի վերջո, ընկրկեց սուլթանի առջև։

Բայրաքդար ստիպուեցաւ Պոլիս մնալ ուրեմն, իսկ Մանուկ բէյ շարունակեց զայն համոզել։ Ի զուր անցան իր այդ բոլոր փորձերը և նույն իսկ պահ մը ջղայնացուցին Բայրաքդարը, այնպես որ Մանուկ ստիպուեցաւ այլևս խոսք չբանալ։ Նույն բախտին արժանացան Քյոսա Քեհյա Ահմեդ էֆենդիի փորձերն ալ, անոնք ևս պատճառ դառնալով Բայրաքդարի ջղայնութեան և հարկադրելով, որ Ահմեդ Ռուսջուգ դառնա սրտնեղ։

Մանուկ բեյի կսկիծը տակավ կխորանար մանավանդ անով, որ կտեսներ, թե ինչպես ենիչերիները, որոնք պահ մը շշմեր էին Բայրաքդարի իշխանության դալեն հետո, աշխուժանալ սկսեր էին։

---

24 Մ. Մսերեան, էջ 148—149։

25 Այդ մասին տե՛ս նաև նույն տեղում էջ 158—159։

Մանուկ բեյ առանձին չէր եկած Պոլիս։ Ան իր հետ ուներ Պապիկը, մեկը իր ամենեն հավատարիմ գործակիցներեն, որ Ասատուր Ավետյանի հետ մեկտեղ՝ Մանուկ բեյի ամենեն վստահելին եղած է, անոր բովանդակ գործունեության ընթացքին։ Ան աջակցեր էր «Ռուսջուգի բարեկամներ»-ուն, երբ անոնք կծրագրեին պետական հարվածը, ու հիմա Պոլիս կու գար Մանուկ բեյին գործակցելու համար կրկին։ Ան հետևաբար Պոլիս էր եղեր բական դեպքերու օրերուն ևս, և անոնց միակ կենդանի վկան մնաց Մանուկ բեյի մահուընեն հետո ալ, և գլխավոր աղբյուրը կազմեց անոնց, երբ Մսեր Մսերյանց գրի կառներ Մանուկ բեյի կյանքին զանազան հանգրվանները։

1808 հոկտեմբերին գրեթե այն օրերուն, երբ Պոլիս կժամաներ Մանուկ, մայրաքաղաք կհասներ նաև Պողոս Սեբաստյան[26], մեկ ուրիշը իր անմիջական գործակիցներեն։ Հմուտ լեզուներու և քաղաքական էնթրիկներու մեջ վարժված՝ Պողոս Սեբաստյան կարևոր դեր մը խաղացած է դիվանագիտական թե բաղարական գործերու մեջ, անցյալ դարու գույգ տասնամյակներուն, սկսելով իր գործակցութենեն Վալաքիոյ իշխան Կոնստանտին Իփսիլանդիի հետ, մինչև իր մասնակցությունը Բայրաքդարի և Մանուկի աշխատանքներուն, ինչպես ատկե հետո ալ,— թեև հայ տարեգրություններու մեջ անտեսված է իր դերը[27]։

Քաղաքական էնթրիկներու մեջ մխրճված հայերու կարգին՝ Սեբաստեանք ամբողջ խումբ մըն էին, գրեթե բոլորն ալ Մանուկ բեյի կապված առավել կամ նվազ չափով։ Ասոնցմե երկուքը՝ Գաբրիել և Մեսրոպ, Պողոսի եղբայրներն էին, և կար չորրորդ Սեբաստյան մը ևս, Մարտին, որ եղբորորդին էր Պողոսի։ Սոյն չորսն ալ աչքառու դարձան զանազան քաղաքական և դիվանագիտական աշխատանքներու մեջ, միշտ Մանուկ բեյի կողքին։ Մեսրոպ վարած է, օրինակ, Մանուկ բեյի հայերեն թղթակցությունները։

Արդ, Պողոս Սեբաստյանն էր, որ Բայրաքդար և Մանուկ օգտագործեցին, երբ ռուսերու հետ իրենց առաջին շփումներն ունեցան՝ հասկացողության մը գետինն ստեղծելու համար։ Այսպես, Պողոս Սեբաստյանն էր, որ 1808 ապրիլ 23-ին, հանուն Բայրաքդար Մուստաֆա փաշայի, Յաշի մեջ բանակցություն վարելու գնաց իշխան Պրոզորովսքիի հետ, ռուսերու և թուրքերու միջև մերձեցման մը ի նպաստ[28]։

Ու հիմա ան Պոլիս կու գար, հավանաբար, աջակցելու համար այն բանակցութեանց, որոնց պիտի ձեռնարկեր բարձրագոյն դուռը ռուս պատվիրակին հետ։

Դժնդակ եղան Մանուկ բեյի համար 25 այն օրերը, զորս անցուց Պոլիս։ Կղզար, որ երկինքը հետզհետե կամպոտեր, մինչ Բայրաքդար և դայն շրջապատող ավազանին հեռու էին գեռ սթափելե։

Ենիչերիները այնքան ամբարտավանացած էին, որ մեծ իմաստության կարիք չկար զզալու համար, թե մթնոլորտը հղի է դեպքերով, որոնք պիտի դային անգամ մը ևս ալեկոծել կյանքը սուլթաններու մայրաքաղաքին մեջ։

26 ՄՌԱՔԱ, գործ 1922, թ. 86—87։

27 Արձանագրենք, որ նույնիսկ ժամանակակից աղբյուրներ հաճախ կշփոթեն ֆրանսացի դիվանագետ զորավար Սեբաստիանին մեր Պողոս Սեբաստյանի հետ. որուն անունը հյուսատոսական տեղեկագիրներուն մեջ նույնպես հիշատակված է Sebastiani անվով։ Դիպվածով փրկված է Պողոսի նոթերու տետրը, որ Ռումանական ակադեմիայի արևելյան ձեռագրերու շարքին կպահվի 182 համարի տակ։

28 ՄՌԱՔԱ, գործ 1918, թ. 124—129։

խոհեմություններ կթելադրեր իրեն, որ օր առաջ մայրաքաղաքեն մեկնի։ Առաջիս հերթին ուզեց հաշվեհարդարի ենթարկել իր ունեցած գործառնությունները Բայրաքդարի հետ։ Չէր փափագեր ապագա թնջուկներու առիթ տալ։ Նման մտահոգություն ունեցեր էր Ռուսջուգի նախկին այան Իսմայիլ Թերսեննեքլիի օրով ալ։

Ունինք 1804 հունիսի 7 թվակիր վավերաթուղթ մը, որով Թերսեննեքլի օղլու Իսմայիլ աղա կհայտարարե, թե որևէ պահանջք չունի Մանուկեն[29]։ Թերսեննեքլի-օղլուի մահեն հետո ևս անոր հաջորդին՝ Բայրաքդար Մուստաֆա աղայի հետ Մանուկ քննած էր հանգուցյալին օրով տեղի ունեցած մետաքսը գործառնության հաշիվները և վճարած իր մնացորդ պարտքը, 27898 դրուշ, ինչպես կվկայե Բայրաքդարի կողմե տրված 1806 հունիսի 26-թվակիր անդորրագիր մը[30]։

Հիմա կուզեր հաշվեհարդարի ենթարկել Բայրաքդարի հետ ունեցած իր նյութական գործառնությունները ևս։ Իր արխիվին մեջ գտանք վավերաթուղթ մը, որ անդորրագիր մըն է՝ Բայրաքդար փաշայի կողմե ստորագրված 1808 նոյեմբերի 8-ին, ահավոր դեպքերեն հազիվ երկու շաբաթ առաջ։ Ան հետևյալ բովանդակությունը ունի. «Ստուգելով մեկ առ մեկ մեր բոլոր գործառնությունները մեր բարեկամ թարգման Մանուկ բեյի հետ Թրրնովայի մետաքսին և ուրիշ գործերու վերաբերյալ, սկսելով այն օրեն, երբ հանգուցյալ Թերսեննեքլի Իսմայիլ աղայի մահեն հետո ստանձնեցի Ռուսջուգի այանի և Թրրնովայի վոյվոտի պաշտոնը մինչև այսօր, 19 ռամազան 1223, ճշտվեցավ որ Մանուկ բեյ 37988 դրուշի գումար մը պարտական կմնա դեռ, գումար զոր ամբողջությամբ մուծեց մեր գանձարանը, այնպես որ չմնաց մեր որևէ ստանալիքը։ Այդ բանին իբր վկայություն տրվեցավ ներկայս, որպեսզի օգտագործվի, երբ որ հարկը պահանջե։ 1223 ռամազան, 19. Մուստաֆա»[31]։

Զարմանալի չէ Մանուկ բեյի նման հեռատես մարդու մը համար, եթե կարևոր իր բոլոր ակտերուն վավերացյալ պատճենները հանած է Պոլսեն չմեկնած։ Այդ ակտերը իրապես ալ Մանուկ բեյի օգտակար պիտի բլլային հետագային։ Մանուկ բեյի հարստությունը, որ առավելապես գոյացած էր առևտրական գործառնություններեն, ինչպես մետաքսի և ադի մենաշնորհներեն, զորս ուներ Թրնովայի և Վալաքիոյ մեջ, միշտ ալ տեղի պիտի տային աշխարհի հետաքրքրության, զարմանքին և նաև կասկածներուն։ Լանժերոն, օրինակ, ֆրանսական ծագումով զբաղավար ռուս բանակին մեջ և միակը ռուս զորավարներեն, որ անբարյացակամ, հաճախ և թունալից է դեպի Մանուկ բեյը,— կրսե իր հիշատակներուն մեջ, թե ան երբ Ռուսջուգեն վերադարձավ՝ Բուխարեստ բերաւ Բայրաքդարին հարստությունն ալ իրենին հետ միասին[32]։

Եվ եթե, այնուամենայնիվ, Մանուկ բեյ չշտապեց հեռանալ Պոլսեն, պարտականության հետևանքով էր, որ հանձնված էր իրեն։ Ինք էր սկսած ռուսերուն հետ առաջին շփումները, երբ դեռ Ռուսջուգ էր, և հիմա ինքն էր, որ դարձյալ կոչված էր այդ շփումները շարունակելու մայրաքաղաքին մեջ։

Արդարև, 1808 նոյեմբերի 12-ին, ինչպես ըսինք, Պոլիս ժամանած էր

29 ԲՔՊԹ, թիվ 26442 և 35176։
30 ԲՔՊԹ, թիվ 26424 և 35132։
31 ԲՔՊԹ, թիվ 26302։
32 Hurmuzaki, Documente, Supliment, III, p. 156.

ռուս պատվիրակ կապիտան Քրասնոքուցքի և իսկույն կապ էր հաստատած մեծ-եպարքոսին հետ Մանուկ բեյի միջոցով։

Ըստ Պապիկի պատմածին՝ «Քրասնաքուցքի նամակաբեր լեալ ի սպարապետէն ռուսաց առ փոխարքայն՝ իմա առ Մուստաֆայ փաշայ, յանդիման եղև նմա ընդ իւր ունելով և զթարգմանն... առընթեր փոխարքայի, բացի Մանուկ պեյէ, այլ ոչ ոք կայր։ Իրրև ընթերցաւ դիրն և ցուցաւ ի բանիցն ակնկալելի դոլ հաշտութիւն, փութացեալ և Մուստաֆայ փաշայ դիւրն մերձենալ զդիտումն օրինակ դայս խօսելով ընդ Քրասնաքուցքեայ. «Խոստացեալ էր մեզ Նապոլեոն տալ երիս բիւրս զօրականաց առ ի մարտ դնել կռուել ընդ ռուսս ե վանել զնոսա ի մերս սահմանաց ի Վլահաց ասեմ և ի Մոլդավիոյ, բայց քանզի հաւատացոյց մեզ իմաստութեամբ հաւատարիմն մեր Մանուկ՝ պէյ, թէ այս խոստումն զաղդիացւոց առ Օսմանեանս պետութիւն խայծ իմն է աչապատիր (զի և յայլ նուազս ևս անհաստատք ի բարեկամութեան երևեալ են նոքա), հաւան չեղէ ընդ առաջարկութեան նոցա այսմ և արդ... ցանկացող խաղաղութեան եմ»։ Յետ բանիցս այսոցիկ աւելի ինչ զրոյցք ոչ եղեն. և ոչ ինչ այլ սահմանեցաւ առ ժամն, բայց միայն խորհուրդք դաշնախօսութեան վախճան առցէ ի Ռուսջուգ, որովհետև ի մտի եղեալ էր Մուստաֆայ փաշայի աւուրց զայրամին ելանել ի Կոստանդնուպօլսոյ։ Եւ առ այս՝ կարգեցան երեսփոխանէ և ի կողմանէ Տերութեան վասն երթալոյ ի քաղաք անդր։ Եվ Մանուկ պէյ՝ որում յանձն էր հոգ հանդերձանաց յուղարկաւորութիւն Քրասնաքուցքեայ, պատրաստեաց զամենայն զմեծագին ընծայսն՝ առաքելիս առ ինքնակալն Ռուսաց, յորս էր և մահիկ իմն լուսնաձև հանգերձ աստեղանիգ զարդու համակ աղամանդեաց, զոր յառանձին ի պարգև կամէին տալ Քրասնաքուցքեայ յերկրորդումն աւուր պայրամին։ Եւ գինք տուեալ էին վասն այնր դահեկանք քսանեհինգ հաղար և հինգ հարիւր»[33]։

Բայրաքդար որևէ ատենե ավելի կարիք ունէր հաշտություն կնքելու ռուսերուն հետ։ Կապիտան Քրասնաքուցքիի ժամանման հաջորդ օրն իսկ, նոյեմբեր 13/25-ին Մանուկ բեյի հանձնեց, իշխան Պրոզորովսքիի ուղղվելու համար. նոր նամակ մը[34], ուր հայտնելե հետո, թե ասկէ առաջ «Ռուսջուգի իր վստահելի մարդուն՝ Մանուկ բեյի» ըրած է կարգ մը հանձնարարություններ իշխանին հաղորդվելու համար, հիմա դարձյալ «իր նույն վստահելի մարդուն» միջոցով կներկայացնե իր անկեղծ բաղձանքը՝ «վերանորոգելու երբեմնի բարեկամական հարաբերությունները այն երկու բարձր պետությանց միջև, որոնք ցանկացող են հարևանական լավ կապերու, որովհետև խաղաղության վերահաստատումը նպաստավոր պիտի ըլլա երկու երկիրներուն ալ, և հանգստություն պիտի բերե անոնց հպատակներուն»։

Բայրաքդարի այս նամակը ևս չի գտնուիր Ռուսիո Արտաքին գործերու նախարարության արխիվներուն մեջ, պարզ այն պատճառով, որ ան Պրոզորովսքիի ձեռքը հասած չէ, այլ մնացած է Մանուկ բեյի թուղթերուն մեջ իր ծրարով միասին, որուն վրա հայ տառերով հետևյալ թուրքերեն մակագրություններ կա, հավանաբար գրված հետագային Մանուկ բեյի արխիվը դասավորողի մը կողմե. «Մեծ վեզիրին կողմե ֆելտ-մարշալին ուղղված՝ ի մասին հաշտության արաղ ավարտման. կերևա թե չէ հանձնված իր հասցեին»[35]։

33 Մ. Մսերեան, էջ 170—171։
34 ԲՀՊԹ, թիվ 26390։
35 Նույն տեղում։

Ռուս պատվիրակին հետ բանակցությունները պիտի սկսեին նոյեմբերի 14/27-ին, Բարձրագույն գրան մեջ։ Այդ օրը անոնք չսկսան սակայն։ Ռամազանի 27-րդ օրն էր, և իսլամներուն համար տոնի օր։ Մեծ-Եպարքոսը ստիպված էր այցի երթալ մյուֆթիին և խնդրած էր Մանուկեն, որպեսզի Քրիսանոքուցքիին դրաղեցնե այդ դիշեր։

Եվ այդ գիշերն էր, որ Պոլիսը պիտի զդրդեր վերստին։ Ենիչերիները անգամ մը ևս պիտի ապստամբեին։

4

Մանուկ բեյի վախերը իրականացան։ Ենիչերիները հաջողեցան նոր ըմբոստություն մը սարքել, ճիշտ մեկ ու կես տարի հետո այն ապստամբությենեն, որ հաջողեր էր գահընկեց ընել սուլթան Սելիմ Գ-ը, անոր փոխարեն գահ բերել սուլթան Մուսթաֆան, և թաղել ընդմիշտ «Նիզամի ջեդիդը», որով Սելիմ փորձեր էր կարդապահ բանակ մը ստեղծել ենիչերիներու խառնիճաղանճին տեղ։

Հիմա դարձյալ ոտքի կկանգնեին այդ նույն ենիչերիները մեկուկես տարի զսպված մնալե հետո, այս անգամ ալ խորտակելու համար Բայրաքդարի սկսած փորձը՝ կարգապահ նոր բանակ մը ստեղծելու,— սեկբանները։ 1808 նոյեմբերի 14/27-ին, Եյլե-ի կաղերի տոնական օրը, որ ռամազան ամսվան 27-ին կգուգադիպի,— ահավոր գիշեր մը ապրեցավ Պոլիս։ Ենիչերիները սլատեհ պահը ընտրած էին ապստամբելու համար կրկին։ Բարձրագույն Դուռը գրեթե անպաշտպան էր այդ օրը, իր պահակաղորքը քաղաքին մեջ ցրված ըլլալով, ենիչերիները իրենց հարձակումները թաղերուն մեջ սկսած նույն այդ ղորքերուն դեմ՝ Բայրաքդարը զրկելու համար իր գերագույն կովանէն, մինչ ուրիշ խուժան մը կերթար կրակի տալ Բարձրագույն Դրան շրջակա շենքերը, և տակավ կսեղմեր պաշարման օղակը Բայրաքդարի բնակարանին շուրջ։

Բայրաքդար հավատարիմներու փոքր խումբով մը ապաստանեցավ քարաշեն աշտարակի մը մեջ, մեկ կողմե կրակեն պաշտպանվելու և մյուս կողմե դեմ դնելու համար ենիչերիներու գրոհին։ Եղերական այդ վայրկյաններուն ան հինգ հոգի միայն ուներ իր շուրջը, ու հայ էր անոցմե մեկը։ Ու հայը, որուն անունը դժբախտաբար ծանոթ չէ մեզի, միակ վերապրողը պիտի ըլլար, ինչպես կպատմե Պալիկ[36]։

Այդ նույն աշտարակին մեջ իր պայթեցուցած վառոդի տակառին հետ իր եղերական մահը գտավ Բայրաքդար։ Եվ մինչ անկե դիակ մը միայն կը մնար Բարձրագույն Դրան ավերակներուն մեջ, իր կուսակիցները պայքարը կշարունակեին դուրսը, անտեղյակ ապդին անցած-դարձածեն։

Ռամիզ փաշան վոխանակ օդնության գալու Բայրաքդարին, գերագույն սխալն ըրեր էր իր ղորքերը զրկելու Էգիրնե-քափու՝ թույլ չտալու համար, որ ենիչերիները օժանդակ ուժ ստանան դուրսեն, երկու ռազմանավերու հրամայեր էր, որպեսզի կրակ բանան ենիչերիներու կեդրոնին վրա, ու հետո միայն մտածեր էր օդնության գալու Բայրաքդարին։

Բայց ուշ էր այլևս։

Ամբոխը, արդեն հաղթական, խուժեց նաև սլալատին վրա, պահանջելով ջնջել սեյմենները (սեկբան), զոր հաստատած էր Բայրաքդար։ Ցույցերը ուղղ-

36 Մ. Մսերեան, էջ 174—175։

ված էին սուլթանին գեմ ալ, և նույնիսկ պահանջողներ կային, որ Մուստաֆան արգելարանեն հանվի և կրկին բերվի գահ։ Ճակատագրական եզավ այս նույնիսկ Մուստաֆայի համար։ Մահմուդ Բ-ի հավատարիմներեն խումբ մը, որուն մեջ կային Ռամիզ փաշան, կադի-փաշան, Մորալը Ալի էֆենդին և Ինճե Մեհմեդը (որ Ռամիզ փաշայի օգնականն էր) մտավ գահընկեց սուլթանին սենյակը և խեղդամահ ըրավ զայն։ Այս կերպով Մահմուդ Բ ապահով կմնար իր գահուն վրա, որովհետև Օսմանի սերունդեն այլևս արու մարդ չկար։

Հսկա դրականություն մը կա լեյլե-ի կադերի գիշերվան այդ եղերական դեպքերուն մասին, իսկ Բայրաքդար անմահացած է ոչ միայն իրեն նվիրված բաղմաթիվ մենագրությանց մեջ, այլ թատերախաղերու և վեպերու մեջ ալ, որոնք հանձին անոր դյուցազն մը կոգեկոչեն։

Ժամանակակից հայ աղբյուրներ ևս կան ողբերգական այդ դրվագներուն շուրջ։ Ատոնք նույն օրերու երկու հայ մտավորականներու գրի առած նոթերն են, որոնց ձեռագիրները պահված են Վիեննայի Մխիթարյանց մոտ և որոնց հեղինակներն են Գևորգ Օդուլլուխյան[37] և Գալուստ Արապյան[38]։ Երկու հեղինակներն ալ այնպիսի մանրամասնություններ կուտան, որոնք կպակսին ուրիշ աղբյուրներու մեջ։ Մանուկ բեյ կրցաւ ճողոպրիլ սակայն ենիչերիներու ճիրաններեն։ Տարբեր աղբյուրներու մեջ տարբեր կերպով պատմված է Մանուկ բեյի փրկվիլը Պոլսո մեջ ստեղծված գահենեն։

Ջելալեթ փաշա, թուրք պատմագիրը, հիշատակելով Բայրաքդարի կուսակիցներուն փախուստը Պոլսեն, սա տողերը կգրե. «Ռամիզքափուդան-փաշա Ջաթալջա փախավ նախ, Սելիմ-Քերայ-սուլթանի կալվածը, հետո Բունար-Հիսար, ուր պահված մնաց քանի մը օր։ Երբ տարածվեցավ Բայրաքդարի մահվան լուրը, խազնետար Ահմեդ էֆենդի Քէօսե-Քեհիա ինքգինք հայտարարեց Ռուսջուգի աւան և իր համախոհները դրկեց շրջանին մյուս այանեներուն մոտ։ Քիչ հետո Ռուսջուգ փախաւ Բայրաքդարի հայ սեղանավորը Մանուկ, և իրեն հետ փաշային մյուս կուսակիցները և սեկբանները։ Ռամիզ փաշա Ռուսջուգ եկավ այն ատեն, Ինճե Մեհմեդ բեյի հետ մեկտեղ»[39]։

Հովնանյանի մոտ Մանուկ բեյի փախուստը արդեն մեկ դրվագն է կարծես վեպի մը։ Նկարագրելով նախ Մանուկ բեյի մտահոգությունները մոտալուտ վտանգի մը առջև, կպատմե, թե ենիչերիներու գլխավորներեն մեկը, որուն եղբայրը մահվրնե աղատած է եղեր Մանուկ Ռուսջուգ գտնված ատեն, կուգա իմաց տալ անոր, թե ենիչերիները պիտի կոխեն շուտով իր տունը, տեղն ու տեղը սպաննելու համար զայն, և խորհուրդ կուտա իսկույն փախչիլ իր բնակարանեն և մոտակա տուն մը ապաստանիլ։ Եվ իրավ ալ քիչ հետո ենիչերիներու ամբոխը, նույն այդ մարդուն գլխավորությամբ, կու գա պաշարել Մանուկի բնակարանը, կխուզարկե ամեն անկյուն, և զայն չգտնելով՝ կմեկնի, կատաղություններ առանց կարենալ գսպելու, մինչ Մանուկ իր ապաստանած տան պատուհանին մեկ ծակեն զարհուրանքով կդիտե այս բոլորը։ Քանի մը օր հետո այդ միևնույն ենիչերին իր թաքստոցը կուգա՝ իմաց տալու համար, թե դինքը հետապնդող ալ չկա, ու կրնա հանգիստ ու անխափան ուզած տեղն

37 Գէորգայ Օդուլլուխեանց վիպասանութիւն որպիսութեան Ճիւլուսին կամ պատմութիւն անձին ի Կ. Պոլիս 1807—1809։

38 Գալուստ դպիր Արապեան, Պատմութիւն դրոշակիր Մուստաֆայ եպարքոսին։

39 Հ. Ղևոնդ Հովնանյան, Միրզայեան Մանուկ պեյին վարուց պատմութիւնը, Վիեննա, 1852, էջ 66—69։

երթալ։ Ասոր վրա Մանուկ Պոլսեն կմեկնի ծպտված՝ Ռուսջուղ երթալու համար։

Մանուկ բեյ իր այն գրության մեջ, զոր 1810 նոյեմբերի 24-ին Բուխարեստեն գրած է իշխան Հովակիմ Լազարյանին և որուն ակնարկեցինք, հետևյալ կերպով կպատմե իր գալը Պոլիս, և իր փախուստը հոնկե, 1808 նոյ. 15/27-ի եղերական գեպքերեն հետո։

«Յաւուրս յայնոսիկ (փոխարքայն) առ իւր կոչեաց և զիս առ ի խօսիլ զոմանց հարկաւորաց. ուր գնացեալ իմ և ի մէջ քսան և հինգ աւուրց ի կատարեալ առնուցեալ զամենայն զործս՝ այն ինչ հանգերձեալ էի զառնալ ի Ռուսջուգ, յանկարծ յիսուն կամ վաթսուն հազար եէնիչերիք գիշերայն յարձակեցան ի Դուռն փաշայութեան ուր էր պալատ բնակութեան փոխարքայի, առ ի սպանանել զողորմելին և անմիջապես հուր արկեալ զնովաւ սրովք և բրովք մարտնչէին գործելով ճապաղիս արեան յերկուց կողմանց, յորում պահու մտեալ փոխարքայի ի քարաշէն զոգատուն իւր հնգետասան արամբք սատակեաց յապստամբաց մարտ եղեալ ի ներքուստ. իսկ զկնի ինն ժամուց յուսահատեալ յօդնութենէ փոխարքայ ողորմելին հուր էարկ ի տակառ վառօդից և զգմբէթ զանձատանն ընդ օդս ցնդեալ երարց ի կենաց ընդ իւր իբր զհազարս ի եէնիչէրիից ի հուր դատելով զնոսա։ Յայնմ գիշերի զբաղում իշխանս և զներքին խորհրդականս սպանին եէնիչերիք, որք և հրապուրմամբ եւրոպացւոց (ևս և բնաւորական շարութեամբ իւրեանց) խնդրէին զիս՝ և մեծագին պարգևս խոստանալով մատնչաց եկին յօթևանս իմ, սպանանել զիս, յորում գիշերի ըստ մասնաւոր նախախնամութեան Աստծոյ լինելով իմն յանծանօթ տան միոյ՝ ոչ կարացին ունել զիս։ Զկնի եօթն աւուրց ի միգապատ գիշերի միում՝ փոթորկալի անձրևօք և միայն երկոքին ծառայիւք իմովք ժամ գտեալ սլարապոյ ելեալ յերիվար—չուեցի ի Պօլսոյ, անցանելով ի տեգիս տեղիս ի միջոյ ապստամբաց. և զգետն Քեագրտխանէի ի լուղ անցեալ երիվարօք՝ իբր 140 վերս հեռի ի Պօլսոյ չոքայս ի սահմանս այնոցիկ զաւառաց՝ որք միանգամ ընդ զօմանտայիւ մերով էին տակաւին։ Անտի ևս ելեալ հասի ի Ռուսջուգ...»։

«Մոլդովայի վոյվոդը» այսպես փախաւ Սուլթաններու մայրաքաղաքէն։

Եղերական դեպքերը, որոնց մեջ վերջ գտավ Բայրաքդար Մուստաֆա փաշայի կյանքը՝ կարճատև վարչապետութենե մը հետո և որոնք Մանուկ բեյը ևս ստիպեցին խույս տալ Պոլսեն, անոր զգացուցին, թե հասած է ժամը իր հուսկ կապերը խզելու Օսմանյան կայսրության հետ, համոզված, թե այլևս ընդունայն է ամեն փորձ՝ «հիվանդ մարդը» դնելու ապաքինման ճամբուն մեջ, և թե բալկանյան ժողովուրդներու համար ուրիշ ապավեն չկա, բայց եթե ռուս ժողովուրդի հովանին։

Եվ սակայն Մանուկ բեյ, որ իր բովանդակ կյանքին մեջ հեռատես գտնված էր, կանխահոգություն էր ունեցած, Պոլսեն խույս տալե գեռ օրեր առաջ, վավերացեալ պատճենները հանել տալու ինչպես իր «դիվան թերջիմանի» անվանման հրովարտակին, նույնպես եպարքոսական պաշտոնագրին, որով իրեն հաղորդված էր «Մոլդովայի վոյվոդ»-ի աստիճանին բարձրանալը։ Զույգ այդ պատճենները գտանք իր արխիվին մեջ՝ վավերացեալ ուրիշ թուղթերու հետ մեկտեղ։ Այդ կանխահոգությունը իզուր չէր, որովհետև եթե «Մոլդովայի վոյվոդ»-ի իր աստիճանը արժեցնելու այլևս երբեք առիթ պիտի չունենար ան, առանձնաշնորհումները՝ զորս իրեն կրնծայեր «Դիվան թերջիմանի»-ի իր տիտղոսը, հնարավորություն ունեցավ օգտագործելու այն չորս տարիներու ընթացքին, երբ դեռ ապրեցավ Բուխարեստ։

Նոր կացությունը, որ կստեղծվի Օսմանյան կայսրության մեջ, երկիրը հանձնելով ենիչերիներու լուծին և դեռ երկար ատեն անոնց ազդեցության տակ պահելով Սուլթան Մահմուդը, Բայրաքդարի նախկին գործակիցներուն (ինչպէս Մանուկի, նոյնպես և մյուսներուն համար), վերջ կու տար բոլոր այն ցնորքներուն, որոնք պահ մը թափ ստացեր էին «նիզամը ջեդիդին» հետ և զորս ի նորս արծարծելու դեռ ի վիճակի չէր Սուլթան Մահմուդը, ստեղծված այդ կացութեան մեջ, երբ ան անզօր էր նույնիսկ ամենաղույնդ պաշտպանություն ընծայելու երեկվան իր պաշտպաններուն, որոնք զահ էին բերեր զինքը և որոնց դեմ մահավճիռ ալ պիտի ստորագրեր շուտով։

Այնպես որ Մանուկ բեյ Պոլսեն փախչելե հետո, 1808 դեկտեմբերին կհասներ Ռուսջուգ, ու տարված այն կասկածեն, թե թուրքերը պիտի հետևին իրեն նաև հոն՝ վերջապես կլքեր ծննդավայրը, և կու գար հաստատվիլ Բուխարեստ, ուր պիտի կանգներ համբավավոր իր խանը, և պիտի նոր կյանք ստեղծեր իրեն այս անգամ պաշտպանությանը տակ ռուսերուն, որոնց շահերու շրջանակին մեջ պիտի գործեր այլևս։

Ռուսջուգը ցմիշտ թողելե առաջ, ան պահ մը շարունակեր էր սակայն իր շփումները իր երբեմնի գործակիցներուն հետ, որոնք նույնպես եկեր էին համախմբվիլ իրենց հին միջնաբերդին մեջ, իրենք ևս խույս տալե հետո Պոլսեն։ Այնտեղ էր Քյոսե Քեհյա Ահմեդը, որ Բայրաքդարին հաջորդած էր Ռուսջուգի այանի պաշտոնին մեջ և կփորձեր իր շուրջն հավաքել դանուբյան շրջանի մյուս այանները՝ Պոլսո դեմ նոր ճակատ սարքելու հույսով։ Այնտեղ էին երբեմնի ծովակալ Ռամիզ փաշան և ուրիշներ Բայրաքդարի փախստական ավազանին։

Մանուկ բեյի գլխավոր հոգն եղավ, այդ պահուն, համոզել Ռուսջուգի մեջ հավաքված թուրք զեկավարները՝ քաղաքը հանձնել ռուսերուն և գալ ապավինիլ ռուս պաշտպանության, թելադրություն, որ Պրոզորովսքիին կուգար և որ, սակայն, չիրականացավ, որովհետև ինչպես Մանուկ, նույնպես անկե քիչ հետո նաև Ռամիզ և Ահմեդ ստիպված կրլլային շուտով հեռանալ Ռուսջուգեն, ապավեն որոնելու համար ռուս բանակին մոտ, երբ լուր կստանային, որ իրենց մահվան դատապարտության ֆեթվան հասած է և միջոցներ ձեռք կառնվին գործադրության դնելու համար զայն։

«Մոլդովայի վոյվոդ»-ը կստիպվեր փախչիլ ուրեմն նաև Ռուսջուգեն, ուրկե շուտով Բուխարեստ պիտի փոխադրեր նաև իր ընտանիքը։

Մանուկ բեյ օսմանյան պետության աչքին դավաճան մրն է այլևս, ինչպես են բոլոր անոնք, որոնք գործակցեր էին Բայրաքդարին։ Ինք ևս դատապարտված է մահվան, ինչպես Բայրաքդարին երկու մյուս գլխավոր գործակիցները՝ Արդուլլահ Ռամիզ փաշան և Քյոսե Քեհյա Ահմեդ էֆենդին։ Պոլսո մեջ կացության տերն է այլևս տխրահռչակ Հալեթ էֆենդին, և Մահմուդ Բ, դեռ ատեն մը, խաղալիք անոր սադրանքներուն։ Ան է, որ պիտի հալածե «դավաճանները» անոնց երկրեն փախուստեն ետքն ալ, և պիտի սպասե պատեհ ժամուն՝ կիրարկելու համար շարաշուք ֆերվան։

Պատեհ այդ ժամը ռուս բանակներուն մեկնումը պիտի բլլար ռումեն երկիրներեն, ու Վալաքիան՝ լավագույն վայրը, ուր կրնար կիրարկվիլ վճիռը, հովանիին տակ Յոն Քարաջա իշխանին, զոր Հալեթ դրկած էր Բուխարեստ։ Քյոսե Քեհյան ծուղակը չինկավ,— հավատք չընծայեց իրեն եղած մեղրածորան հրավերներուն, և Ռուսիայեն չդարձավ ետ։ Ռամիզ փաշա խաբվեցավ,

եկավ Բուխարեստ, Թուրք դահիճին ձեռքով զլխատվելու համար 1812 մարտի 25-ին Քալենթինա կոչված վայրին մեջ, քաղաքին մոտիկ։ Մանուկ չսպասեց իր հերթին. նույն դիշերն իսկ խույս տվավ երկրեն։

Օսմանյան կայսրության սահմաններեն և ռումեն երկիրեն իսպառ կմեկներ մարդ մը, որ կարճ պահ մը «Մոլդովայի վոյվոդ» տիտղոսը կրեց։

Նոր շրջան մը կբացվի Մանուկ բեյի կեանքին մեջ, շրջան, որ զանազան հանդրվաններե ղեռ պետք է անցնի, մինչև իր խորհրդավոր մահը՝ 1817 հունիս 21-ին։ Բոլոր այդ հանդրվանները, որոնք շահեկան էջեր էին ինքնին անցյալ դարու առաջին զույգ տասնամյակներու անցքերուն մասին Դանուբի ափերուն վրա և որոնք ընդարձակ զլուխներ կգրավեն Մանուկ բեյի կեանքին և գործունեութեան նվիրված մեր մենագրության մեջ, մեզ պիտի պարզեն դերը, զոր ան, Պոլսեն բաժնվելե հետո ևս, ունեցավ ռուս և Թուրք պատերազմին և անոր հետևող հաշտության դաշնագրին մեջ՝ ռուս զենքերու հաջողության և ռուսական շահերու ապահովման համար։

Շահեկան գլուխներ պիտի կազմեն նաև իր գործունեությունը և դերը ինչպես Դանուբեան մարզի տնտեսական կյանքին, նույնպես Թուրքիան ալեկոծող զեպքերուն մեջ նախքան շրջանը, որ այս հոդուածին նյութը կկազմե. իր ուշագրավ գործունեությունը ռումեն հողի վրա՝ ինչպես նախապես, նույնպես իր կապերը խղելե հետո Օսմանյան կայսրության հետ 1808-ին. և վերջապես՝ նույնքան ուշագրավ իր կյանքը ռումեն հողեն ևս խույս տալե հետո 1813-ին, երբ գնաց Ռուսիա հաստատվիլ՝ Քիշնևեն հետևելու համար ռումեն իշխանապետությանց և առհասարակ Թուրքիո գործերուն և անոնց մասին տեղյակ պահելու համար ռուս իշխանությունները և հուսկ ուրեմն իր փորձերը քաղաք մը կանգնելու համար իր իսկ միջոցներով, հոն՝ ուր Սիրեթը Դանուբ կը թափի։

Բեղմնավոր այս գործունեությունը, զոր Մանուկ բեյ ունեցաւ հազիվ 48 տարի տևող իր կարճ կյանքին մեջ (1769—1817), հարստանալու մարմաջով տարված գործի մարդու մը կամ քաղաքական էնթրիկներու մեջ մխրճված անձնավորութեան մը գործունեությունը չէր լոկ, ինչպես ան կերևա մեկը մյուսեն ավելի հեքեաթունակ գրվածքներու մեջ՝ զորս օտարներ նվիրած են անոր կյանքին, այլ նաև հետևողական ճիգը մարդու մը, որ կփորձե ճամբա բանալ ռուս ժողովուրդին, գիտակ այն դերին, զոր կատարելու կոչված էր ան բալկանյան և այլ ժողովուրդներու ճակատագրին մեջ։